«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայ-ռուսական համալսարանի գիտական գծով
դիրեկտոր իր.գ.դ., պրոֆեսոր Պ.Ս. Ավետիսյան

«14» հունիս 2021թ.

ԿԱՐԾԻՔ

Հայ-ռուսական համալսարանի
(առաջատար կազմակերպության)

Միքայելյան Անի Սարմենի՝ «Ընդդատության հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում» թեմայով՝ ԺԲ.00.04. - Դատական իրավունք (դատարանակազմութուն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննութուն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ, իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հայ-ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնը՝ մասնակցությամբ ամբիոնի վարիչ, ի.գ.թ., դոցենտ Ա.Գ. Թունյանի, ի.գ.դ., պրոֆեսոր Ա.Գ. Դավթյանի, ի.գ.թ., դոցենտ Յ.Վ. Հայրապետյանի, ի.գ.թ. Ե.Ռ. Նիկողոսյանի, ի.գ.թ. Ա.Ա. Մանուկյանի, ի.գ.թ. Կ.Մ. Հովհաննիսյանի, ի.գ.թ. Ա.Գ. Մալխասյանի, ի.գ.թ. Ե.Ռ. Դանիելյանի, ի.գ.թ. Ն.Գ. Դավթյանի, ի.գ.թ. Մ.Ա. Քալաշյանի, ավագ դասախոս Օ.Ա. Հովհաննիսյանի, ամբիոնի լաբորանտ Ի.Վ. Խաչատրյանի քննարկեց Միքայելյան Անի Սարմենի՝ «Ընդդատության հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում» թեմայով ԺԲ.00.04. - Դատական իրավունք (դատարանակազմութուն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննութուն,

փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Հետազոտության թեմայի արդիականության մասին: Ընդդատության հիմնախնդիրները լուսաբանող ծավալուն, 170 էջ կազմող, առանց օգտագործված իրավական և մասնագիտական աղբյուրների, ատենախոսությունը կարելի է արդիական համարել, չնայած արդեն իրականացված դատաիրավական բարեփոխումների արդյունքում՝ 2018 թ. ընդունված ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նորովի է կարգավորում դատական ընդդատության և ենթակայության ինստիտուտները:

Այնուամենայնիվ, նշված իրավական ինստիտուտներում կատարված իրավաստեղծ գործընթացները, օրենսդրական փոփոխություններն ու լրացումները ուսումնասիրման, անհրաժեշտ վերլուծության և նախկինում գործող օրենսգրքի՝ ընդդատության և դատական ենթակայության ինստիտուտի իրավադրույթների հետ համեմատության և վերլուծության կարիք ունեն՝ արդի վիճակի մասին գիտական պատկերացումներ ունենալու և առաջացած խնդիրները, ինչպես նաև ապագայում հնարավոր հիմնախնդիրները լուծելու համար:

Այս իմաստով, անվիճելի է, որ գիտական աշխատությունն ունի իր ուրույն գիտական նշանակությունը՝ տվյալ ոլորտում եղած գիտական աշխատությունների, դատական պրակտիկայում և իրավաստեղծ ոլորտում ձևավորված ավանդույթների և գործող օրենսգրքի դրույթների կիրառման համադրման նպատակով՝ գիտական դիտարկման և անհրաժեշտ եզրահանգումների կատարելու համար:

Վերը նշված դիտարկումները վերաբերում են ատենախոսության արդիականությանն ու նրա տեսագործնական նշանակությանը:

Ատենախոսության գիտական արդյունքների, նրանց տեսագործնական նշանակության և գիտական նորույթի մասին: Առաջատար կազմակերպությանն է ներկայացվել՝ որպես ատենախոսության գիտական արդյունք 7 գիտական հոդված, որից 5–ը վերաբերում են ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսդրության ընդդատության ինստիտուտի արդի

վիճակին և զարգացումներին, իսկ մյուս երկուսը լուսաբանում են նախկինում գործող 1998 թ. ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսդրության ընդդատության ինստիտուտը, ինչը թույլ է տալիս եզրահանգելու, որ հեղինակն իրազեկված է նաև տվյալ ինստիտուտի մինչ արդ եղած իրավակարգավորումների մասին:

Ատենախոսության սեղմագիրը, որը ևս ներկացավել է ատենախոսության հետ, հակիրճ արտահայտում է հիմնական գիտական աշխատության մեջ արտացոլված դրույթները:

Գիտական դիտարկումներ և հանձնարարականներ պաշտպանությանը ներկայացված առաջարների վերաբերյալ: Գիտական վերլուծության արդյունքում ձևավորված արդյունքի և գիտական գաղափարների մասնագիտական որակների և տեսագործնական կիրառման հնարավորությունների վերաբերյալ եզրահանգումներ կատարելու համար, անհրաժեշտ է անդրադառնալ ատենախոսության նորույթին և պաշտպանությանը ներկայացված առաջարկներին, ատենախոսության կառուցվածքին և բովանդակու-թյանը, արված եզրակացություններին:

1.Ատենախոսության ներածության մեջ նշվում է, որ հետազոտության գիտական նորույթը հայ իրավագիտության մեջ ընդդատության ինստիտուտի առաջին անգամ համալիր և բազմակողմանի դիտարկումն է: Նույն գաղափարը արտահայտված է նաև հետազոտության տեսական և գործնական նշանակությունը ներկայացնող ներածության հատվածում, որտեղ հեղինակը եզրահանգում է, որ ատենախոսության մեջ կատարված հետազոտությունների տեսական նշանակությունը ամենից առաջ պայմանավորված է նրանով, որ իր ատենախոսությունը հադիսանում է ընդդատության ինստիտուտին նվիրված առաջին համալիր աշխատանքը հայ իրավագիտության մեջ:

Միաժամանակ, ատենախոսության մեջ, հեղինակի կողմից օգտագործված մասնագիտական աշխատություններից, տեղեկանում ենք, որ հայ իրավագիտության մեջ՝ ընդդատությանը նվիրված առաջին ատենախոսությունը 1999 թ. ԵՊՀ իրավագիտության մասնագիտական խորհրդում պաշտպանությանը ներկայացված Դավիթ Կարապետյանի՝ «Ընդդատության ինստիտուտի կատարելագործման

հիմնահարցերը ՀՀ քաղաքացիական դատավարությունում» թեմայով թեկնածուական ատենախոսությունն է: Հետևաբար, հեղինակի այս գիտական եզրահանգումը ճիշտ չէ և աշխատանքի գիտական նորույթը, ոչ էլ տեսական նշանակությունը վերը նշված գաղափարը կազմել չի կարող:

2. Պաշտպանությանը ներկայացված 7 առաջարկները հիմնականում ենթադրում են նոր օրենսդրական լրացումներ և փոփոխություններ՝ ընդդատության ինստիտուտը կարգավորող ՀՀ քաղաքացիական դատավարության գործող օրենսգրքի նորմերում: Առաջարկների մի մասը պարունակում է այդ նոր իրավանորմերի ձևակերպումները և, անկախ, ներկայացված առաջարկների նպատակահարմարությունից և վիճահարույց լինելուց, դրանք կարելի է դրական գնահատել:

3. Ատենախոսության կառուցվածքի, գլուխների և պարագրաֆների վերաբերյալ գիտական դիտարկումը թույլ է տալիս եզրահանգելու, որ այն նվիված է ընդդատության ինստիտուտի արդի զարգացումներին, քան թե հիմնախնդիրներին, որոնք ուսումնասիրության հիմնական նպատակն են և պետք է արտացոլված լինեն նաև գլուխների վերնագրերում և բովանդակության մեջ, քանի որ այդպես է վերնագրված ատենախոսությունը:

4. Ատենախոսությունն ավարտվում է եզրակացությամբ, որտեղ հեղինակի եզրահանգումներն արտահայտված են 19 կետով:

Գիտական աշխատությունն ավելի համոզիչ կլիներ հիմնախնդիրների հայտնաբերման և դրանց լուծման առումով, եթե եզրակացության մեջ նշված եզրահանգումների մի մասը տեղ գտներ պաշտպանությանը ներկայացվող առաջարկներում, բացառելով այն եզրահանգումներն ու առաջարկները, որոնք արդեն վերլուծված են տեսության մեջ և կիրառվում են դատական պրակտիկայում:

Եզրակացություն: Գնահատելով կատարված գիտական ուսումնասիրության արդիականությունը, նշանակությունն ու կարևորության աստիճանը իրավագիտության տվյալ բնագավառում, պաշտպանությանը դրված գիտական առաջարկությունների մասնագիտական որակը և ինքնուրույնությունը՝ առաջատար կազմակերպությունը,

վերը շարադրվածի հիմքով, ձևավորել և ներկայացնում է իր գիտական կարծիքն ու հանձնարարականները քննարկման առարկա դարձաց ատենախոսության վերաբերյալ:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Միքայելյան Անի Սարմենի՝ «Ընդդատության հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում» թեմայով ԺԲ.00.04. - Դատական իրավունք (դատարանակազմութուն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննութուն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը ամբողջական գիտական հետազոտություն է, լիովին համապատասխանում է <<Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի>> 10-րդ կետով թեկնածուական աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել և հավանության է արժանացել Հայ-ռուսական համալսարանի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի 2021 թ. հունիսի 14-ի նիստում, արձանագրություն թիվ 15.

Հայ-ռուսական համալսարանի
քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական
դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ՝ իր.գ.թ., դոցենտ Ա.Գ. ԹՈՒՆՅԱՆ

Նիստի քարտուղար՝ Ի.Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի
գիտական քարտուղար՝ Ռ.Ս. ԿԱՍԱԲԱԲՈՎԱ